

**ՆԱԻՐԱ ԲԱՆԱՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ  
ORCID ID 0000-0003-3530-3434  
nairamelsiki@gmail.com*

DOI: 10.54503/1829-0116-2022.2-161

**ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԲԱՆԱԿԱՆ  
ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ  
ՎԵՊԵՐՈՒՄ\***

**Բանալի բառեր-** Նշան Պեշիկթաշյան, քնարավեպեր, Հիսուս, Մարիամ Մագթաղինացի, Աստվածամայր, արքետիպ, խորհրդանիշ, մեղք, փրկություն:

Ֆրանսահայ անվանի գրող, երգիծաբան Նշան Պեշիկթաշյանի որոշ վեպեր՝ քնարավեպ և հրաշավեպ անվանումով՝ («Սիդոնա», «Ռապպի», «Մեղքի քարը (Կաաբա)» քնարավեպերը, «Լուլուտի» հրաշավեպը), բովանդակային և ենթաժանրային յուրահատուկ նորամուծություն են, և առանձնանում են իմաստասիրական լրջմիտ խորհրդածություններով: Այս վեպերը բյուզանդական շրջանի պատմական իրողությունների հենք ունեն, նրանցում կան աստվածաշնչյան պատումների հետ նմանություններ, սուրբգրային այլուզիաներ, խորհրդանշաններ, միֆական բազմաթիվ տարրեր ու արքետիպեր, որոնց օգնությամբ գրողը նոր, կենսափիլիսոփայական հայացքով է դիտարկել աստվածաշնչյան դեմքերն ու դեպքերը:

Վեպերում ակնառու տեղ են գրավում հեղինակի՝ կրոնի և նրանից առթված իմաստաբանական քննաբանումները, քրիստոնեական պատգամներն ու դրանցից բխող բարոյաբանական հայեցակետերը: Սուրբգրային թեմաների գեղարվեստական այլաբանությամբ պատկերելով մարդու մեղսավոր արատները՝ սեռական կիրք, այլասերություն, ազահողություն՝ Պեշիկթաշյանը փորձել է գտնել մեղքերի մեջ թաղված մարդկության փրկության ճանապարհը:

Այդ պատճառով վեպերի գլխավոր հերոսներին Պեշիկթաշյանն ընտրել է Նաև Աստվածաշնչից՝ Քրիստոս, Աստվածամայր, Մարիամ Մագթաղենացի և այլք, ու նրանց օժտել է մարդկային տարատեսակ գծերով: Հատկապես առանձնանում է Քրիստոսին՝ իբրև գլխավոր հերոսի, իբրև մարդկային ամե-

\* Ընդունվել է տպագրության 22.11.2022 թ:

Նատարբեր հատկանիշներով, ընդհուպ՝ մեղսավոր արատներով, ավելին՝ մեղքերով բեռնավորված պատկերելու, մարդ-կերպար ընտրելու նորարարությունը: Հիտուսի մեջ տեսնելով մարդուն, նրա մարդկային բնույթից առթված հոդեղեն ցանկությունները՝ Պեշիկթաշյանը կրոնի ու հոգևոր կյանքի մղումները դիտարկում է բարոյություն անելու, մեղսավոր հոգիներին փրկելու, մաքրագործվելու հավիտենական ընթացքի մեջ:

Պատերազմի սանձազերծման մեջ տեսնելով սիրո բացակայությունը՝ Պեշիկթաշյանը համայն աշխարհի փրկության ճիգերի մեջ կարևորում է հատկապես կնոջ՝ մոր (Աստվածամոր և Մարիամ Մագթաղինացու արքետիպեր) մեծագույն դերակատարումը, քրիստոնեական մարդասիրության դիրքերից աշխարհին նայելու և սիրելու կարողությունը: Հեղինակը գտնում է, որ որպես ապաշխարության բալասան՝ անվերապահ ու անանձնական, աստվածային ու լուսավոր սերն է փրկելու աշխարհը. ըստ գրողի՝ անգամ մարդկային մեղսավոր եսը ունակ է այդ սիրո միջոցով, բազմաստիճան հոգևոր խոկումների ու ապաշխարանքների շարունակական ընթացքով մաքրագործման:

Այս վեպերում Պեշիկթաշյանը կարևորել է նաև հայերի դերի վճռորոշ նշանակությունը մարդկության փրկության ճանապարհին՝ առաջադրելով օտար հողում ազգային դիմագիծը անխախտ պահելու, մայրենի լեզուն չմոռանալու, արմատներին հավատարիմ մնալու սկզբունքները:

Սույն հոդվածը առաջադրում է Պեշիկթաշյանի վեպերի բացառիկ դերը՝ որպես աստվածաշնչյան թեմայով կարևոր նախադեպ հայ գրականության պատմության մեջ:

**NAIRA BALAYAN**

*Ph.D in Philology, asistent professor*

*Institute of Literature after M. Abeghyan of NAS of RA*

## **BIBLICAL MORAL AESTHETICS IN NSHAN PESHIKTASHLYAN'S NOVELS**

**Key words** - Nshan Peshiktashlyan, lyrical novels, Jesus, Mary Magdalene, Mother of God, archetype, symbol, sin, salvation.

Some of the famous French-Armenian writer, satirist Nshan Peshiktashlyan's novels called lyrical novels ("Sidonna", "Rappi", "Stone of Sin (Kaaba)") and a fiction novel ("Luluti"), are a unique innovation in terms of content and sub-genre; they stand out by their serious philosophical reflections. These novels are based on the historical realities of the Byzantine period, they have similarities with biblical stories, scriptural allusions, symbols, many mythical elements and archetypes, through which the writer observed biblical figures and events from a new, biophilosophical view.

In the novels, a prominent place is occupied by the author's semantic analysis of religion and its implications, Christian epistles and moral views that are arising from them. Peshiktashlyan tried to find a way to save mankind buried in sins by depicting the sinful vices of man - sexual passion, depravity, greed - with an artistic allegory on biblical themes.

For this reason, Peshiktashlyan chose the main characters of the novels from the Bible: Christ, the Virgin Mary, Mary Magdalene and others, and endowed them with various human traits. The innovation of the choice of a man-figure, depicting Christ as the protagonist, with all kinds of human characteristics, even with sinful shortcomings, moreover, burdened with sins, stands out. Seeing in Jesus the earthly aspirations of his human nature, Peshiktashlyan observes the urges of religion and spiritual life in the eternal process of creation of good, salvation of sinful souls and purification.

Seeing the lack of love in unleashing a war, Peshiktashlyan particularly emphasizes the greatest role of a woman, a mother (archetypes of the Mother of God and Mary Magdalene), in the efforts to save the world, the ability to look at the world and love from the point of Christian humanity. The author believes that unconditional and impersonal, divine and enlightened love will save the world as a balm for repentance. According to the writer, even the sinful human «I» can be purified through this love, through a continuous process of multiple spiritual purification and repentance.

In these novels, Peshiktashlyan also emphasized the decisive role of the Armenians on the path of salvation of mankind, putting forward the principles of keeping the national image intact in a foreign country, not forgetting the native language, and remaining true to the roots.

The current article presents the unique role of Peshiktashlyan's novels as an important precedent in the history of Armenian literature on a biblical theme.

**НАИРА БАЛАЯН**

*Кондидант филологических наук, доцент  
РА НАН институт литературы имени М. Абегамяна*

**БИБЛЕЙСКАЯ ПРАВСТВЕННАЯ ЭСТЕТИКА В РОМАНАХ НШАНА  
ПЕШИКТАШЛЯНА**

**Ключевые слова** - Ншан Пешикташлян, лирические романы, Иисус, Мария Магдалина, Богородица, архетип, символ, грех, спасение.

Некоторые романы известного французского писателя армянского происхождения, сатирика Ншана Пешикташляна, называемые лирическими и фантастическими («Сидонна», «Раппи», «Камень греха (Кааба)», «Лулути»), в плане тематики и субжанра представляют собой уникальное новаторство и отличаются существенными мудрыми размышлениями. Эти романы основаны на исторических реалиях византийского периода, в них есть сходства с библейскими сюжетами, нашли отражения библейские аллюзии, символы, множество мифических элементов и архетипов, с помощью которых писатель рассматривал библейские фигуры и события с новой, биофилософской точки зрения.

В романах видное место занимают тема религии и вытекающие из нее семасиологические размышления автора, взгляды на христианские заповеди и нравоучения. Изобразив в форме художественной аллегории пороки человечества, а именно греховные страсти, прелюбодеяние, жадность, Пешикташлян пытался найти пусть спасения человечества, погрязшего в грехах.

По этой причине Пешикташлян главных героев романов выбрал также из Библии: Христа, Деву Марию, Марию Магдалину и других, и наделил их различными человеческими чертами. Особо выделяется образ Христа как главного героя, наделенного разнообразием человеческих черт вплоть до греховных поступков, и в дополнение новаторский выбор и изображение человека-образа, отягощенного грехами.

Видя в Иисусе человека с характерными его сущности бренными желаниями, Пешикташлян рассматривает побуждения религии и духовной жизни в извечном стремлении спасения греховных душ, творения добра и духовном очищении.

В развязывании войны видя отсутствие любви, Пешикташлян в попытках спасения мира подчеркивает особенно величайшую роль женщины, матери (архетипы Богоматери и Марии Магдалины), умение смотреть на мир и любить с позиции христианского человеколюбия. Автор уверен, что мир спасет безусловная и безличная, божественная и просветленная любовь. Согласно автору, даже греховное человеческое «эго» через эту любовь, посредством многочисленных размышлений и непрерывных покаяний способно к очищению.

В этих романах Пешикташлян подчеркнул также решающую роль армян на пути спасения человечества, руководствуясь принципами сохранения родного языка и неизменности национального образа на чужбине, верности своим корням.

В данной статье представлена исключительная роль романов Пешикташлына как важного прецедента в истории армянской литературы на библейскую тему.

### **Ներածություն**

Ն. Պեշիկթաշյանի՝ որպես գրական-հասարարական անհատակա-նության աշխարհայացքի վրա իր ներգործությունն է ունեցել ֆրանսահայ գաղութում հեղափոխիչ դերով հանդես եկած «Մենք» խմբակը, որում ակտիվ մասնակցություն ունեցած ժամանակի նշանավոր «Փարիզի տղաքի»՝ Շահան Շահնուրի, Չարեհ Որբունու, Շավարշ Նարդունու, Վազգեն Շուշանյանի, Նիկողոս Սարաֆյանի ու այլոց կողքին իր բարձր գեղագիտությունն է առաջադրել իսկ նաև Նշան Պեշիկթաշյանը՝ անխախտ պահելով օտար հողում ազգային դիմագիծը պահելու, մայրենի լեզուն չմոռանալու, իր արմատներին հավատարիմ մնալու սկզբունքները: Գրական կյանքի նվիրյալները հայրենասիրական այս հիմքի վրա առաջ քաշեցին իրենց տեսլականը. գրականության միջոցով ուժացման վտանգին դիմահար կանգելը:

Նշան Պեշիկթաշյանի գրական հարուստ ժառանգությունը ընդգրկում է չափածո և արձակ բանաստեղծություններ, պոեմներ, առակներ, մանրապատումներ, նորավեպեր, պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, թատերգություններ, դիմանկարներ, թատերագիտական ուսումնասիրություններ: Փոքր ծավալի արձակ գործերը՝ ֆելիետոններ, ակնարկներ, պատմվածքներ, դիմանկարներ, երգիծական և քնարական մանրապատումներ, Նշան Պեշիկթաշյանի աշխարհայացքի հայեցակետերն արտացոլող գողտրիկ ստեղծագործություններ են, որոնք հրապարակվել են ոչ միայն մամուլում («Ազատ օր» «Ազդակ», «Ակոս», «Բագին», «Սփիւռք», «Հայրենիք», «Ալիք», «Մարմարա», «Անահիտ», «Անդաստան», «Չուարթնոց», «Մենք», «Յառաջ» և այլն), այլև տպագրվել են առանձին գրքերով ու ժողովածուներով՝ նրա անունը ճանաչելի դարձնելով ողջ հայ գրական աշխարհում:

1928-1929 թթ. և 30-ականների սկզբին մամուլում տպվում են նրա մի քանի արձակ գործեր՝ «Լուսին եւ Նշխար», «Տեսիլներ», «Նարդոս», «Ձիթենի» (վերջին երկուսը «Ռապայի» քնարավեպի առաջին և երկրորդ գլուխներն էին՝ տպված 1928 թ. և 1929 թ.), 1928-1934 թթ. հրատարակվում են Ն. Պեշիկթաշյանի՝ հայ գրականության մեջ նորամու-

ծուրթյուն համարվող քնարավեպերը և հրաշավեպերը՝ Ավետարանի և բյուզանդական շրջանի պատմությանը վերաբերող թեմաներով, հրատարակվում են «Սիդոննա», «Ռապայի», «Մեղքի քարը (Կաաբա)» քնարավեպերը որպես եռագրություն (ընդ որում, վերջինս գրքով հրատարակվում է մոտ երեք տասնամյակ անց): 1942 թ. հրատարակվում է «Լուլուտի» հրաշավեպը, որը ևս բյուզանդական կայսրության ժամանակաշրջանին վերաբերող ստեղծագործություն է, հետագա տարիներին՝ 50-ականներին, ավելի հասուն ու նոր որակի գաղափարական ընդգրկումներ ունեցող այլ ստեղծագործություններ, հետո՝ 1957 թ.-ին, տպագրվում է «Յիսուսի դիմանկարը» պատմական վեպ անվանվող ստեղծագործությունը (հոդվածում սույն վեպը չի քննվել): Նշան Պեշիկթաշյանը նորամուծություն արեց ոչ միայն ձևի՝ ժանրերի առումով, քանի որ հրաշավեպեր և քնարավեպեր, որպես այդպիսիք, հայ գրականության պատմության մեջ չկային, այլև բովանդակության և մանավանդ գրական հերոսների առումով. աստվածաշնչյան դեմքերին նա օժտել է մարդկային տարատեսակ գծերով, ընդհուպ՝ մեղսավոր արատներով, ավելին՝ Հիսուսին պատկերել է մեղքերով բեռնավորված:

Սոյն հոդվածի խնդիրը Նշան Պեշիկթաշյանի եռագրության և «Լուլուտի» վեպի բարոյաբանական գեղագիտության հիմնային առանձնահատկությունների ուսումնասիրելն է, դրանց՝ աստվածաշնչյան պատումների, սուրբգրային հիմնորոշ գաղափարաբանության հետ առնչակցությունը ցույց տալը և հիմնավորելը:

Ուսումնասիրության արդիականությունը հենված է համաժամանակյա հենքի վրա. սիրո, ներումի, կարեկցանքի մշտնջենական զգացումները մարդկության պատմականության հողվույթում դեմ հանդիման և մշտակա հակասության մեջ են չարի, դաժանության, ատելության, պատերազմի հետ: Պեշիկթաշյանի վեպերում այս պայքարը ներկայացված է նորովի, և առաջադրվում են մարդկության փրկության նոր ուղիներ և դեղատոմսեր: Սույն հոդվածում առաջին անգամ ներկայացվում է վիպասանի՝ վեպերում ուրվագծված արքետիպերի և միֆերի առաջադրման համակարգային մտածելակերպը, սուրբգրային հերոսներին, հատկապես Հիսուսին առաջին անգամ հայ գրականության մեջ որպես մեղսավոր, մարդկային արատներով գեղարվեստական կերպար ներկայացնելու յուրահատկությունները, հայ ինքնությունը աստվածաշնչյան գաղափարաբանական ու բարոյագիտական ճշմարտություններին շաղկապելու միջոցով նրան ուժացումից

փրկելու, հավատն ու լեզուն չկորցնելու՝ Կարոտի գրականությունից առթված նպատակները:

Նշան Պեշիկթաշյանի գրական վաստակին անդրադարձել են իր ժամանակի գրականագետներից շատերը, հետագայում արդեն՝ շատ քչերը: Այդուհանդերձ, ուսումնասիրողների հոդվածներն և գրախոսություններն մեծ մասամբ նվիրված են հեղինակի երգիծաբանությանը: Եռագրությունն ու աստվածաշնչյան թեմայով վեպերը կամ շրջանցվել են, կամ եղել են նկարագրական ուսումնասիրություններ (Տես՝ Գոպանյան Ա., «Անահիտ», 1931, էջ 88-117, Հովհաննիսյան Ա., 1928, 128 էջ): Սույն հոդվածը ներառում է այս թեմայով համակողմանի ուսումնասիրված նյութը:

### **Քրիստոսի միջո-կերպարի վերաշրջում**

Նշան Պեշիկթաշյանի վիպական հոլովույթում իրենց քնարակա-նությանմբ ու էպիկական պատումի միահյուսմամբ առանձնացվող հրաշավեպերը և քնարավեպերը բյուզանդական շրջանի իրողությունների հենք ունեն, նրանցում աստվածաշնչյան պատումների հետ նմանություններ կան, սուրբգրային այլուզիաներ, միջակական բազմաթիվ տարրերի ու արքետիպերի առկայություն, որոնք այս վեպերը յուրահատուկ ստեղծագործություններ են դարձնում: Հեղինակի բարոյաբանական գեղագիտությունը ազուցված է քրիստոնեական պատգամներին ու դրանցից բխող բարոյախոսության հայեցակետերին, և ըստ այդմ նա կրոնի և նրանից ածանցվող իմաստաբանական քննաբանումների ներքո է գեղարվեստաբանում աստվածաշնչյան դեմքերն ու իրադարձությունները: Հատկապես առանձնանում է Քրիստոսին՝ իբրև գլխավոր հերոսի, իբրև մարդկային ամենատարբեր հատկանիշներով սովորական մարդ-կերպար ընտրելու տրամաբանությունը: Ճիշտ է, սկսած միջնադարից մշակույթի տարբեր ոլորտներում առանձնանում է Քրիստոսին պատկերելու միտումը, սակայն հիմնականում նա կերպավորվում է իբրև սուրբ, իբրև Աստված. «Միջնադարը...մարդու ինքնաճանաչողությունը բխեցնում էր Աստծո ճանաչողությունից» (Էդոյան Հ., 2006, էջ 6):

Նոր ժամանակներում արդեն փոխվում է գրողների հայացքը. «Այն, ինչը Միջնադարում փակված էր և մարդու գիտակցությունից դուրս մղված, մարդու համար (այսօրվա-ձնթ.՝ Ն.Բ.) ձեռք է բերում կարևորագույն արժեք, քանի որ նրա գիտակցության մեջ տեղի է ունենում

Քրիստոսի միֆո-կերպարի վերաշրջում, ուր Նա բացահայտվում է նոր տեսանկյունից՝ լուսավորելով մարդու ներքին-անհատական մարդկային աշխարհը, որին այդ տեսակետից չի մոտեցել ոչ մի ձեռք» (Էդոյան Հ. ա, 2006, էջ 6): Պեշիկթաշյանը, իր վեպերում ընտրելով Քրիստոսին որպես վիպական հյուսվածքի գլխավոր դերակատար, հերոսին տալիս է նոր բնույթ, նոր հատկանիշներ, որոնք ընդլայնում, անգամ վերափոխում են կերպարի սուբբոյային առանձնահատկությունները ու բացահայտում հեղինակի մտասևեռման նշանակությունը:

Անշուշտ, հարկ է ընդգծել նաև 20-րդ դարասկզբին Եվրոպայում մեծ տարածում գտած խորհրդապաշտական գրական ուղղության դերակատարումը Պեշիկթաշյանի՝ այս թեմայով գրական ստեղծագործություններում: Նրա «Սիդոնսա», «Ռապպի» («Նարդոս» և «Ձիթենի»), «Կաաբա» եռագրությունը, «Հիսուսի դիմանկարը», «Լուկուտի» վեպերը, լինելով պատումի Էպիկական խորքերով, հարուստ քնարականությամբ առլեցուն երկեր, աչքի են ընկնում խորհրդանիշների մեծ բազմազանությամբ (ընդ որում՝ խորհրդանշանները և՛ առարկա են, և՛ մարդ, և՛ գործողություն): Ստեղծված լինելով որպես թերթոն ժանրի վեպեր՝ նրանցում ակներև են և՛ արկածային պատումի տարրերը, և՛ ընթերցողին գրավելու համար արված սիրային լայնախորհուրդ տեսարանները, և՛ անգամ պագշոտ տեսիլները: «Իր կազմաբանությամբ թերթոն վեպը բաց համակարգ է, որը հնարավոր է դարձնում ժանրի փաստորեն բոլոր ներժանրային կադապարների իրացումը: Թերթոն վեպի այսօրինակ ունիվերսալիզմը գրական-գեղարվեստական գործընթացում միշտ կենսունակ լինելու պերճախոս վկայությունն է, որը պայմանավորված է նաև մշտաուև ընթերցողական պահանջարկի երևույթով» (Հակոբյան Գ, 19..., էջ 221-222):

Պեշիկթաշյանի վեպերին անդրադարձել են ժամանակակիցները, ոչ միայն ընդգծել նրանց հարուստ ու գեղեցիկ լեզուն, զուևագեղ համեմատություններն ու հեղինակի արվեստի ոճը, այլև դիտարկել թերությունները, որ գեղարվեստական տեսակետից վնաս են հարցնում վեպերի գրական արժեքայնությունը: Այս առումով հատկապես նշելի է Արշակ Չոպանյանի գրականագիտական խիստ գնահատականներ պարունակող սովոր աշխատանքը, որ անաչառ ու առարկայական վերլուծություն է՝ թեպետ սուր քննադատությամբ, բայց դրանում ևս շեշտվում է հրաշավեպերի՝ հայ գրականության մեջ նախադեպ և առանձնահատուկ, գեղարվեստական ուրույն արժանիքներով օժտված լինելը:



Վեպերը «հենված» են Աստվածաշնչի վրա. նրանք նկարագրում են Հիսուսի կյանքն ու գործունեությունը գեղարվեստական պատկերավորման այլաբանությամբ, ինչպես նաև աստվածաշնչյան պատումի որոշ դրվագների գեղարվեստական ընդլայնմամբ ու դիպաշարին նոր էպիկական ընթացք ու բովանդակություն հաղորդելով: Ուշագրավ է, որ Պեշիկթաշյանը գեղարվեստական ամբողջացման հասնելու համար օգտագործել է ոչ միայն սուրբգրային պատումի դիպաշարային տարրեր, այլև աստվածաշնչյան հարուստ բառային ֆոնդ՝ երբեմն անգամ առանց որևէ փոփոխությունների մեջբերելով դրանք ու հաճախ էլ դիտավորությամբ ժամանակավրիպություն ստեղծելով հերոսների բառերի և աստվածաշնչյան դեմքերի խոսքերի միջև: «Հենվելով որևէ այլ տեքստի, նրա առանձին հատվածների կամ գաղափարակիր-սիմվոլիկ հերոսների վրա, այլ կերպ՝ նրանց ներմուծելով սեփական տեքստ՝ հեղինակը որոշակի նպատակ է հետապնդում: Նա ենթատեքստ է առաջացնում և ընթերցողների որոշակի շերտի ուշադրությունը հրավիրում այս կամ այն խնդրի վրա» (Զալանթարյան Ժ, 2012, էջ 155),-գտնում է գրականագետը՝ խոսելով միջտեքստայնության խնդրի շուրջ:

Միջտեքստային հղումներով պայմանավորված՝ Պեշիկթաշյանի վերոնշյալ վեպերում աներկբայորեն գատորոշվում է բարոյաբանական խնդիր-մտահոգությունը՝ ստեղծել գեղարվեստական իրականություն, որտեղ մարմնականի ու հոգևորի բախումը թե՛ զարգացումներով կանխորոշելու է մարդկության հոգևոր առողջացումը: Մարդկությանը հուզող հավերժական այս խնդիրը իր վեպերում Պեշիկթաշյանը դիտարկում է Հիսուսի երկրային կյանքի հայտնի և հորինված մի քանի դրվագներով՝ փորձելով Զրիստոսի միջոցով ճանաչելու մարդկության սեփական եսը: «Երկարատև երազներից արթնացած մարդը իր աչքերով Զրիստոսի մեջ փնտրում է ինքն իրեն, իր «ես»-ի արդարացումը՝ ձգտելով Նրա *մարդկային* կողմի միջոցով ճանաչել և գիտակցել ինքն իրեն որպես *այս-աշխարհային* գոյություն՝ կանգնած *տարածության* մեջ, իր ճակատագրին դեմ-միայնակ, աշխարհի «օտար ուժերի» խաչմերուկում, ընտրության առջև՝ դառնալով արվեստի և գրականության կենտրոնական դեմքը, որը ծավալվում է, մեծանում, հասնում բարձրակետին և սկսում նահանջելը»: (Էդոյան Հ., 2006, էջ 4-5): Աստվածաշնչյան պատումների գեղարվեստականացման հղովույթում դիտարկելով Հիսուսին և նրա մեջ տեսնելով մարդուն, նրա մարդկային բնույթից առթված հողեղեն ցանկությունները՝ Պեշիկթաշյանը կրոնի ու հոգևոր

կյանքի մղումները դիտարկում է մեղսավոր հոգիներին փրկելու, բարոյություն անելու, մաքրագործվելու նպատակայնությամբ: Այս պատճառով «Սիդոննա», «Ռապայի», «Լուլուտի» վեպերում, ի հեճոնկս քրիստոնեական սրբազան պատվիրանների, հերոսները թաղված են ստախտության, նախանձի, ստոր ու քստմենյի արարքների, աշխարհիկ գեխ գինարբուքների, սեռական տարբեր ցանկությունների, զանազան այլ մեղքերի ծովում: Ըստ վիպասանի յուրօրինակ գեղագիտական սկզբունքների՝ ծայրաստիճան բացասական այս հատկությունները էլ ավելի պետք է սաստկացնեին մեղքի գիտակցումը և էլ ավելի պետք է շեշտադրեին աստվածային բարոյաբանական այն փրկությունը, որ շնորհվելու էր մարդկությանը Հիսուսի միջոցով: Հեղինակը չի խորշում անգամ արտասովոր պագշոտ ձևերով, սիրային տարօրինակ վայելքներով տեսարաններ ստեղծաբանելուց, որոնցում պատկերվում է Հիսուսը Մարիամ Մագթադինացու հետ: Նմանօրինակ գեղարվեստական մոտեցումը կապված է, անշուշտ, գրողի գեղարվեստական հայեցակարգին, նրա կենսափիլիսոփայությանը, գրականության մեջ Քրիստոսի բնույթի նոր մեկնաբանմանը: «Մշակույթի համակարգի կառուցվածքը, ուղղվածությունը և նրա իմաստային ինքնությունը կախված է Քրիստոսի ընկալման և մեկնաբանման բնույթից... Քրիստոսի կերպարը ժամանակի մեջ անշարժ չէ, նա «քայլում է» մարդու հետ համաչափ՝ երբեք չըքելով նրան և չդառնալով նրա համար վերացական «դիմակ»: ...Թե ինչպես է մարդը(ստեղծագործողը-Ն.Բ) պատկերացնում Քրիստոսին՝ դրանով էլ պայմանավորված է նրա մտքերի, զգացմունքների և ներքին որոնումների հոսքը, նրա կյանքի ձևը, աշխարհի մոդելը...» (Եդոյան Հ., 2005, էջ 28)

Հիսուսի կերպարի մեջ դնելով մարմնական գայթակղությունների մղումներ՝ հեղինակը նրան դիտարկում է ոչ թե որպես մարդեղացած Աստված, այլ տառապանքով մաքրված մարդ, որը իր կենսափորձով ու աստվածաբանական խորհրդածություններով գնում է դեպի աստվածացում:

### **Աստվածաբանական իմաստասիրության և մարմնական կյանքի հատում**

Եռագրության առաջին՝ «Սիդոննա» վեպում հերոսների ընտրությունը սահմանափակ է. գլխավոր հերոսներ Սիդոննայի և Էմմանելի հանդիպման, սիրահարության, ֆիզիկական մերձեցումների, բարո-

յահողգեբանական տարբեր զրույցների պարբերությամբ ուրվագծվում է երկու միջակայս միատերիաների հատումը, որ միախառնված է և դեռ չորոշարկված: Սիդոննան՝ հին միատերիալ մտածողության կրողը, և Էմմանելը՝ նոր միատերիայի կրողը՝ աշխարհի վերափոխման ու բարոյապես առողջացման ջատագովը, սիրային հարաբերություններում, մարմնական վայելքների ըմբռնումից հետո պիտի հասկանան, որ սեփական եսի ու հետևաբար աշխարհի վերափոխման համար պետք է աստվածային մաքրագործող սերը: Հիսուսի Էմմանուել անվան հետ անթաքույց զուգորդումը, բառային այլուզիաները աստվածաշնչյան խոսակցություններին մատնում են Նշան Պեշկիթաշյանի բուն նպատակը՝ սերը որպես մարդասիրության ու փրկության առիավատչյա դիտարկելը: Վավաշուտ ու ջնաղագեղ Սիդոննան, որ բոլոր տղամարդկանց խոնարհեցնում էր մեն մի հայացքով, Մարիամ Մագթաղինացու արքետիպն է: Նա չի ճանաչում սերը և իր հին միատերիալ կարգից պիտի անցնի նորին միայն ու միայն այդ սիրո միջոցով: Մարմնական սիրո վայելքից հետո ճանաչելով ոգեղեն սերը՝ Սիդոննան տառապանքներից հետո է միայն հանելու աստվածային սիրո, որով կփրկվի աշխարհը. «Սիրով, Էմմանել, միայն սիրով կարելի է քիչ մը բարեփոխութիւն յուսալ» (Նշան Պեշկիթաշեան Ն., 1928, էջ 117): Աստվածային յուսավոր սեր, որ փրկելու է աշխարհը. դա, ըստ գրողի, այնքան պարզ է, որ անգամ մարդկային մեղսավոր եսը ունակ է այդ սիրո միջոցով, բազմաստիճան խոկումների ու ապաշխարանքների շարունակական ընթացքով մաքրագործման:

Նույն գաղափարական հարցադրումն է նաև «Րապայի» վեպի առաջին և երկրորդ գլուխներում: Առաջին գլխում մեղսավոր կանանց արքետիպն է՝ Մարիամ Մագթաղենացին՝ Մերեմը, և Հիսուս Քրիստոսը՝ Րապային՝ Եշուան: Պարականոն գրականության մեջ այլ ուղղություն ստացած, ինչպես նաև բազմաթիվ տարընթերցումների առիթ հանդիսացած աստվածաշնչյան՝ Քրիստոսի ոտքերը լվանալու, նարդոսի յուղով օծելու, մագերով սրբելու ու ներում ստանալու պատումը Նշան Պեշկիթաշյանը ստեղծաբանել է որպես սիրավեպ, որին ազդեցված են իր՝ հեղինակի իմաստասիրական լայնահուն խոհաբանությունները, բնության ու սիրային տեսարանների քնարական գեղեցիկ նկարագրությունները: Հերոսների պոռթկուն ու կրքաշատ սիրային գեղումները ընդգծում են հեղինակի միտումնապաշտությունը. աստվածային նախասկիզբ ունեցող Եշուան մարդեղանում է՝ տրվելով Միրիա-

մի գայթակղություններին: Աշխարհիկի ու հոգևորի սերտաճումը Պեշիկթաշյանը հյուսել է բազմաթիվ հղումներով առ Երգ երգոցը, Երբեմն անգամ սոսկ գեղարվեստորեն սքողելով երգերգոցյան կրկնությունները: Եշուալի և Մերեմի վայրկենական սիրահարությունն ու աշխարհիկ սերը և դրանց վայելումը պատկերվում են խորհրդապաշտության դիրքից: Առհասարակ, հեղինակի ողջ ստեղծագործական աշխարհում մեծագույն դեր է հատկացված խորհրդանշաններին, և դրանց մեկնությունները կրկին ապացուցում են, որ գրական երկի արարումը ինչպես ստեղծաբանական, այնպես էլ ներգագնողական գործընթաց է: «Գրական տեքստում խորհրդանիշի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ հարաբերությունների անսահմանության դրանց արտահայտումը ամրակայվում է հենց իրենով (խորհրդանիշ): Այս առումով խորհրդանիշը սեղմում է տեղեկությունը և թույլ է տալիս համեմատաբար փոքր համատեքստում ստեղծել արհեստական իրականություն, փորձարկում անել, որի արդյունքում ստացվում է գեղարվեստական ստեղծագործություն» (Авдеенко И., 2014, сг. 17):

Պեշիկթաշյանի հերոսների՝ զանազան խորհրդանշաններով կառուցված հարաբերությունների գեղարվեստական ամբողջացումը հենված է կրկին մարմնականի ու հոգևորի հակասության հենքին: Նարդոսի բույրը, որ խորհրդանշորեն ներկա է ամբողջ պատումի մեջ, մատնանշում է սիրո գաղափարի հավիտենականությունը, նրա աստվածային էութենաբանությունը:

Հաջորդ գլխում ևս պատումը զարգանում է միֆոլոգիական այլաբանությամբ՝ ցուցադրելով հեղինակի գաղափարական նույն սևեռվածությունը: Այս վեպում ևս աչքի է զարնում խորհրդանշանների առատությունը. խաչված Բապայի մտատեսիլում ձիթենուց ճոճվում են առաքյալները և Նայում մերկ Մերեմին. Եուդայի դավաճանությունը ցանկասիրությունից է ծնվում, մյուս առաքյալները ևս Մերեմի մարմինն են տեսչում: Ծառի արքետիպը, որ բարու ու չարի կենաց ծառն է Նաև մատնանշում, Պեշիկթաշյանի վեպում ստացել է նոր իմաստային լուծում. քրիստոնեական հավատի ծառի խորհրդանշանը կտրվում է մարդկությունը, որ տառապում է ցանկասիրության ախտով, մնալու է նույնը, քանի որ չի ձգտում փոփոխության ու չի տեսնում այն աստվածային սերը, որով պիտի գնա մաքրագործման: «Կը տեսնէ աշխարհը որ կ' ընթանայ միենույն ճամբէն, հին ճանապարհէն, նոր անունով սրբացուցած ամէն հեթանոսութիւն, անաստուածութիւն» (Պեշիկթաշ-

լեան Ն., 1931, էջ 105): Կտրված ձիթենու արմատների վրա երևացող Մերեմի պատկերը հեղինակը հակադրում է խաչված Քրիստոսին՝ փորձելով չարի ու բարու հավերժական պայքարի այս փուլում արձանագրել մեղսավորի, ցանկասիրության մարմաչի ժամանակավոր հաղթանակը:

Իր ընդարձակ վերլուծության մեջ անդրադառնալով այս վեպերին՝ Ա. Չոպանյանը գտնում է, որ աստվածաբանական իմաստասիրությունը քարոզող ու տռփական խաղերի նկարագրություններ պարունակող վեպերի գեղարվեստականությունը բավական հակասական է: Թեև նա Պեշիկթաշյանի գործերը համադրում է եվրոպական գրողների ստեղծած գրական երկերին և գեղարվեստականության առումով վեր դասում վերջիններս, այդուհանդերձ համարում է, որ հայ գրողի «վիպակներուն անվիճելիորեն գեղեցիկ մասերը, իրենց տեսակին մեջ՝ զմայելի էջեր են եւ անկորուստ պիտի մնան մեր նոր գրականութեան բարձրագոյն արտադրութեանց շարքին մեջ» (Չոպանյան Ա. ա, «Անահիտ», 1931, էջ 116):

Մարդկային եության հարցերը կրոնի տեսանկյունից քննելու կերպն է երևակվում նաև եռագրության վերջին «Կաբա» գրքում (գիրքը 1933 թ. հատվածաբար տպագրվել է «Յառաջ»-ում, հետո՝ 1934-1935 թթ., «Հայրենիք» ամսագրում և 1960թ. արդեն ամբողջովին, որպես թերթին՝ «Սփիւռք» շաբաթաթերթում), որում մարդկային մեծագույն մեղքը՝ Աբելի սպանությունը, Նշան Պեշիկթաշյանը քննում է տարատեսակ հարցադրումներով՝ ոչ ծավալուն մեկնաբանություններով հասնելով մարդկային մեղսավոր եության հոգեվերլուծության, համադրելով կրքի ու սիրո առաջին դրսևորումները խղճի ու ամոթի համատեքստում: Եղբայրասպանության միջանկյալ պատումն ու միջանկյալ կերպարի միտումնավոր շրջանառելը միտված են գրողի բարոյախոսության ելակետերին, ըստ որոնց պատճառաբանվում են զգացականի ու մտավորի, սիրո ու կենդանական բնագրի հակասությունները: «Սփի «վերադարձը» տեղի է ունենում որպես կանոն հիմնականում վեպի կառուցվածքային տիրույթում: Օրինաչափություններից մեկն էլ այն է, որ շատ հաճախ գեղարվեստական տեքստերում միջոլոգեմների դերը կատարում են այլ գեղարվեստական տեքստերից փոխառնված միտումնավոր, նպատակային հղումները, մեջբերումները և վերաձևակերպումները» (Սեմիրջյան-Բեքմեզյան Ա, էջ 39):

Պեշիկթաշյանը միջանկյալ պատումները ծառայեցնում է իր գե-

ղագիտական հայեցողականակարգին, գտնում, որ մարդկային միայնակության խնդիրը ծնվում է աշխարհաճանաչողության, ինքնագիտակցության խորքերում, և մարդկային անհուն տառապանքից ազատվելու ելքը աղոթքի զորությունն է, թեև մարդկային բազմաթիվ մեղանչումները մեղքի գիտակցումը միշտ արթուն են պահում:

**Մայր. միֆոլոգիական խորքերից դեպի բարոյաբանական վերելք**

Բյուզանդական շրջանի մասին ստեղծագործություններում առանձնանում է «Լույուտի» վեպը, որը Պեշիկթաշյանը գրել է 1940 թ. և տպագրել 1942 թ.: Վեպը երկրորդ համաշխարհային պատերազմի ու առհասարակ պատերազմ երևույթի անմիջական արձագանքն է: Ճիշտ է, հրաշավեպ կոչվող այս գործում բաղիյուսված են հեքիաթի, վեպի, քնարական բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները, սակայն այն ուշագրավ ստեղծագործություն է դառնում հենց թեմատիկ ընդգրկվածության շնորհիվ, կոմպոզիցոն շրջանակների հմուտ դրվագաբանմամբ, իրապատում ու հրաշապատում դիպաշարային առանձնահատկություններով: Բազմաճյուղ գործողությունները ընթանում են երկու՝ մարդկանց ու գերբնական արարածների տարբեր աշխարհներում. բյուզանդական իրականությունը գրողը պատկերել է լատինական բառերի, անունների օգտագործումով, հագուստի ու զարդերի, պալատների ու սովորական տների ու այգիների պատկերավոր նկարագրություններով: Վեպի առանցքում դարձյալ մարդկային մեղսավոր հոգու մեջ անթեղված հակադրամիասնությունն է՝ բարու ու չարի պայքարն է, որի ծավալվում է հակընդդեմ կողմերով՝ զվարթուններ ու սատանիկներ, աղավետձաղիկ ու դիվաձաղիկ և այլն: Հերոսուհին՝ Լույուտին, հրաշագեղ աղջիկ է, որի հոգում բույն են դրել սնափառությունը, մեծամտությունն ու հպարտությունը: Դիպաշարի ընթացքում նա փախչում է հայրական տնից, որպես հարձ գերեվարվում Լոքս զորավարի կողմից, այնուհետև նրան խլում է Հիմաեակոս կայսրը: Ի վերջո դեպքերը Լույուտիին դարձնում են թագուհի: Դիպաշարային նման վայրիվերումները Պեշիկթաշյանը կիրարկել է իր նպատակային եզրահանգման համար: Մարիամ աստվածամոր, Մարիամ Մագթադինացու արքեպիսկոպոսի մեկտեղող Լույուտիի՝ մոր արքեպիսկոպոսից հերոսը մեղսավոր արատներից գնում է դեպի մաքրագերծում և սրբագործում: Այս կերպարը, անտարակույս, առնչություններ ունի և՛ Սիդոնայի, և՛ Մերեմի կերպարների հետ, քանզի ելակետը հեղինա-

կի՝ մարդկային աշխարհի վերափոխման, խաղաղության ձգտումների գաղափարաբանական սևեռումներն են: Պատերազմի և խաղաղության նուրբ սահմանագիծը պահելու համար գրողը բարձրացնում է հատկապես կնոջ՝ որպես մոր դերակատարման կարևոր խնդիրը: ««Մայր»-ը այս կապակցությամբ ցույց է տալիս ոչ միայն որդիության հարաբերություն, այլև եգոյի բարդ հոգեկան իրավիճակը» (Нойманн Э., 2012, с. 5): Պատերազմի սանձազերծման մեջ տեսնելով սիրո բացակայությունը՝ Պեշկյաշյանը համայն աշխարհի փրկության ճիգերի մեջ կարևորում է հատկապես կնոջ՝ մոր մեծագույն դերակատարումը, նրա սիրելու, աշխարհին քրիստոնեական մարդասիրության դիրքերից նայելու կարողությունը. Լուլուտին այս ամենի պատգամախոսն է. «Պարզեւել խաղաղութիւն՝ տառապանքէն մրկկած հոգիներուն: Ընծայել խաղաղութիւն՝ ցաւէն երկրաշարժուած մարմիներուն: Ձգտիլ նաեւ որ խաղաղութիւն ըլլայ երկրի վրայ. խաղաղութիւն ամենեցուն: Որքան ատեն որ պատերազմ կայ՝ ապացոյց է որ սեր չկայ, ու որքան ատեն սեր չկայ՝ չկայ նաեւ քրիստոնեութիւն» (Պեշկյաշյան Ն., 1942, էջ 211): Որդուն պարտադրաբար սպանելուց հետո Լուլուտին, որ իր մեջ արդեն խտացնում է մոր միֆոլոգիական խորքերը, ստանձնում է խաղաղության ծաղիկը՝ Աղավնածաղիկը, մարդկությանը հոտոտել տալու առաքելությունը, դառնում հանուր աշխարհի մայրը՝ խաղաղություն քարոզող յուրատեսակ մուկետիկ: Ավետարանական շատ արտահայտություններ գրողը վեպում հղել է իր իմացաբանական եզրահանգումները բացահայտելու համար: Աշխարհի խաղաղ գոյատևման, մարդու՝ միայնակ չմնալու և իր նմանին ապրումակցման, պատերազմին մշակույթով ոչ ասելու յուրօրինակ ստեղծագործություն է այս վեպը, ըստ որի գաղափարական ընդհանրացման՝ աշխարհի խաղաղության համար յուրաքանչյուր մարդ ունի իր հոգում դրված բարության աղավնածաղկի հունդը, որը ծիլ է տալիս միայն մոր սրտում, և միայն մարդու բարի կամքից է կախված խաղաղության բերկրանքն զգալու կարողությունը:

Վեպի էպիկական ընթացքը ընդմիջարկում է Պեշկյաշյանի գույժը՝ գրեթե կանխատեսական մտահոգությունն առ այն, որ գերբնական արարածները՝ սատանիկները, մահիկի խորհրդանշանով արդեն գրավում են աշխարհի մի մասը:

Վեպի այլ շերտ էլ ակներև է դարձնում գրողի հայրենասիրական նկրտումները. բացառիկ համարելով հայերի դերն աշխարհում՝ նա

ընդգծում է հայրության դերակատարումը խաղաղության հաստատմանը միտված պայքարի գործում. հերոսների՝ Արմայիսի, Արմայի, Արմենաքի և այլ անուններ, Արմենիայի մասին Սիսակի և քեռի Գուրգենի զրույցը՝ Արմենական ասուլիսը, փաստում են հեղինակի հայրենասիրական դիտարկումն այն մասին, որ հայերը նույնպես խաղաղության պայքարում ունեն իրենց առաքելությունը, և այսպես էլ է այն, որ հայերը, լինելով բյուզանդական կամ այլ երկրների տիրակալներ, չեն հոգացել Հայաստանի՝ իրենց բնօրրանի բարօրության ու հզորացման մասին:

**Այսպիսով՝** Նշան Պեշիկթաշյանի՝ աստվածաշնչյան թեմաներով վիպագրությունը, ի թիվս մյուս ստեղծագործությունների, արտացոլում է Կարոտի ու Նահանջի գրականության միտումները ու Նաև դառնում է կյուբական հարաբերություններով պայմանավորված բարոյական արժեզրկումների, հոգևոր արժեքների նվաստացման, հակակրոնական պառակտիչ ազդեցության դեմ մշակութային դիմակայություն: Նշան Պեշիկթաշյանի վեպերի այս անդրադարձը նոր մեկնաբանություն է հավելում Հիսուսի վերաբերյալ գրական-մշակութային ուսումնասիրություններին, որոնց հեղինակները այսօր էլ խոր ու անթաքույց հետաքրքրությամբ ուշադրության կենտրոնում են պահում Քրիստոսի միֆո-կերպարը և աստվածաշնչյան այլ կերպար-մարդկանց:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Գրքեր

1. **Հակոբյան Գ.**, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2007, 560 էջ:

2. **Հովհաննիսյան Ա.**, Տիտղթ. Սիդոնա: «Նշան Պեշիկթաշյան» ուսումնասիրութիւն, Փարիզ, տպ. Ներսես1928, 128 էջ:

3. **Պեշիկթաշյան Ն.**, Լուկուտի, Փարիզ, տպ. Տեր-Հակոբյան, 1942, 257 էջ:

4. **Պեշիկթաշյան Ն.**, Սիդոնա, Փարիզ, տպ.Ներսես, 1928, 128 էջ:

5. **Պեշիկթաշյան Ն.**, Րապայի, Կ. Պոլիս, տպ. Սելամեթ, 1931, 106 էջ:

### Ամսագրեր

6. **Զոպանյան Ա.**, Յիսուս եւ Նշան Պեշիկթաշյանի եռանկարը, «Անահիտ», Փարիզ, տպ. Morris Père et Fils, 1931, Գ տարի, թիվ 3-4, սեպ.-դեկ., էջ 88-117:



### Համացանցային հղումներ

**7. Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Գարուն, ԳՄ հրատ. Երևան, 2005, թիվ 1, էջ 26-38, <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Garun1967/2005/1.pdf> (մուտք 26.06.2022):

**8. Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Համատեքստ-2005, Երևան, Եր. համալս. հրատ., 2006, էջ 3-20, <http://ysu.am/files/105506.pdf> (մուտք 26.06.2022):

**9. Սեմիրջյան-Բեքմեզյան Ա.**, Միջը 20-րդ դարի գրականության մեջ, էջ 39, [https://www.academia.edu/40344671/Alvard\\_Semirjyan-Bekmezian\\_Myth\\_in\\_the\\_20th\\_Century\\_Literature](https://www.academia.edu/40344671/Alvard_Semirjyan-Bekmezian_Myth_in_the_20th_Century_Literature) (մուտք՝ 19.06.2022):

**10. Զալանթարյան Ժ.**, Միջտեքստայնություն, «Նորք», Երևան, 2012, թիվ 2, էջ 148-159, <http://www.yasu.am/files/inter1.pdf> (մուտք 27.11.2022):

**11. Авдеенко И.**, Символ и художественный образ, Филологические науки. Вопросы теории и практики, № 1 (31) 2014, часть 1, Из. «Грамота», Тамбов, ст. 15-18, [https://www.gramota.net/articles/issn\\_1997-2911\\_2014\\_1-1\\_02.pdf](https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_1-1_02.pdf) (մուտք՝ 25.06.2022):

**12. Нойманн Э.**, Великая Мать, КДУ, Москва, 2012, ст. 5 <https://libcat.ru/knigi/nauka-i-obrazovanie/psihologiya/418885-5-erih-nojmann-velikaya-mat.html#text> (մուտք՝ 15.06.2022):

### REFERENCES

1. Avdeenko I., Simvol i khudozhestvennih obraz (Symbol and artistic character), Filologicheskie nauki. Voprosi teorii i praktiki, №(31) 2014, chast' 1, Iz. "Gramota", Tambov, st. 15-18. // [https://www.gramota.net/articles/issn\\_1997-2911\\_2014\\_1-1\\_02.pdf](https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_1-1_02.pdf) (In Russian)

2. Chopanyan A., Yisus ev Nshan Peshikt'ashliani erankarë (Jesus and Nshan Peshiktakashlyan's triptych), "Anahit", Pariz, 1931, G tari, t'iv 1-2, sep.-dek., 116 ej 88-117. (In Armenian)

3. Ėdoyan H., Sharzhum depi havasarakshrut'yun (Movement towards equilibrium), Hamatext-2005, Yerevan, Yer. Hamals. Hrat., 2006, ej 3-20. (In Armenian)

4. Ėdoyan H., Sharzhum depi havasarakshrut'yun (Movement towards equilibrium), Garun, Yerevan, 2005, t'iv 1, ej 26-38. (In Armenian)

5. Hakobian G., Hodvatsner ev usumnasirut'yunner (Articles and studies), S. Ėjmiatsin, 560 ej. (In Armenian)

6. Hovhannisyan A., Titght'. Sidonna. Nshan Peshikt'ashlian usumnasirutyun ("Nshan Peshiktashlian" study), Phariz, tp. Nerses, 1928, 128 ej. (In Armenian)
7. Noihmann E., Velikaya Mat' (Great Mother), KDU, 2012, Moskva// <https://libcat.ru/knigi/nauka-i-obrazovanie/psihologiya/418885-5-erih-nojmann-velikaya-mat.html#text>(In Russian)
8. Peshikt'ashlian N., Rappi (Rappi), K. Polis, 1931, 106 ej. (In Armenian)
9. Peshikt'ashlian N., Luluti (Luluti), Phariz, 1928, 257 ej. (In Armenian)
10. Peshikt'ashlian N., Sidonna (Sidonna), Phariz, 1928, 128 ej. (In Armenian)
11. Qalantarian Zh., Mijteqstaynut'yun (Intertextuality), Norq, 2012, t'iv 2, ej 148-159 // <http://www.yasu.am/files/inter1.pdf> (In Armenian)
12. Semirjian-Beqmezian A., Mifë 20-rd dari grakanut'yan mej (Myth in 20th Century Literature) [https://www.academia.edu/40344671/Alvard\\_Semirjian-Bekmezian\\_Myth\\_in\\_the\\_20th\\_Century\\_Literature](https://www.academia.edu/40344671/Alvard_Semirjian-Bekmezian_Myth_in_the_20th_Century_Literature) (In Armenian)

**Նաիրա Բալայան**-բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ինչպես նաև Երևանի «Հայրուսակ» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ և դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Սփյուռքի գրականություն, գրականության տեսություն և քննադատության հիմնասխեմներ, նորագույն և արդի գրականության տարբեր հիմնահարցեր: Հեղինակ է 2 տասնյակից ավել քննադատական և գիտական հոդվածների ու գրախոսությունների: Հեղինակ է ուսումնական ձեռնարկի, խմբագիր է գիտական մենագրության, գիտամեթոդական ձեռնարկների և ժողովածուների:

ORCID ID 0000-0003-3530-3434  
 nairamelsiki@gmail.com

**Наира Балаян** - кандидат филологических наук, старший научный сотрудник в Институте литературы имени М. Абегамяна НАН РА, преподаватель и заведующая кафедрой армянского языка и литературы в Ереванском университете "Айбусак".

Научные интересы: проблемы литературы диаспоры, теории литературы и критики, а также различные проблемы новейшей и современной литературы. Автор более двух десятков критических и научных статей и рецензий, автор учебного пособия, редактор научной монографии, научно-методических пособий и сборников.

ORCID ID 0000-0003-3530-3434  
 nairamelsiki@gmail.com

**Naira Balayan**- Ph.D in Philology, asistent professor, Senior Researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA and lecturer, Head of the Chair at the Department of The Armenian Language and Literature at Yerevan Haybusak University. Scientific interests: The problems of Diaspora Literature, Literature Theory and Criticism, as well as various issues of Contemporary and Modern literature. Author of more than two dozen critical and scientific articles, reviews, Author a manual, edited scientific monographs, scientific-methodological manuals and collections.

ORCID ID 0000-0003-3530-3434

nairamelsiki@gmail.com